

ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՕԺԱՆԴԱԿՈՂ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ

ՄԵՔ՝ ՆԻԿՈԼԱՅ ԵՐԿՐՈՐԴ

ԿԱՅՍՐ ԵՒ ԻՆՔՆԱԿԱԼ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈՅ

Մոսկուայի, Կիևի, Վլադիմիրի, Նովգորոդի, Թագաւոր Կազանի, Թագաւոր Աստրախանի, Թագաւոր Լեհաստանի, Թագաւոր Սիբիրիայի, Թագաւոր Տաւրիկեան Խերսոնիսի, Թագաւոր Վրաց, Տէր Պսկովի և Մեծ Իշխան Սմոլենսկի, Լիտուայի, Վոլինի, Պոդոլսկի, Ֆինլանդիայի, Իշխան Լատլեանդիայի, Լիֆլեանդիայի, Կուրլեանդիայի, և Սիմիգալի, Սամոգիտի, Ռելաստոկի, Կալելիայի, Տվերի, Իւգորի, Պերմի, Վեատկայի, Բոլգարիայի և այլոց. Տէր և Մեծ Իշխան Նեբքին Նովգորոդի, Ներնիգովի, Ռեազանի, Պոլտաւի, Ռոստովի, Յարոսլաւլի, Ռելազեորի, Ուդորի, Օբդորի, Կոնդիայի, Վիտեբսկի, Մստիսլաւլի և բոլոր Հիւսիսային կողմանց, Հրամայող և Տէր Իվերիայի, Քարթալինիայի և Կաբարդինեան երկրի և Հայկական Նահանգի, Ճերքեզաց և այլոց ժառանգական Տէր և տիրապետող, Տէր Թուր-

Քեստանի, Թագաժառանգ Նորվեգիայի, Դուքս Շլեզվիգ—Հոլշտէյնի, Ստորմարինակի Դիտմարինակի Պետ—Մարսինակիի և Օլդենբուրգի են, են, են.

Յայտ առնեմք ամենայն հաւատարիմ հպատակաց Մերոց.

Հոգալով զպահպանութենէ սիրելի սրտի Մերում խաղաղութեան, Մեք ի գործ եդաք զամենայն ջանս առ ի ամրացուցանել խաղաղութեան ի հեռաւոր Արևելս: Այսու խաղաղասէր նպատակաւ ՄԵՐ յայտնեցաք զհամաձայութիւն առաջարկեալ ի Կառավարութենէ Ճապոնիայի վերաքննութեան եղեալ ի մէջ երկուց Տէրութեանց համաձայնութեանցն, ըստ Կորէական գործոց: Յարուցեալ բատ այսմ իրի բանակցութիւնքն շառին սակայն զվախճան և Ճապոնեայն չսպասելով տակաւին ընդունելութեան վերջին պատասխանւոյն Մերոյ Կառավարութեան, յայտնեաց դադարեցուցանել զբանակցութիւնս և քակտել զդիպլոմատիքական յարաբերութիւնս ընդ Ռուսիոյ:

Ոչ տեղեկացուցեալ զայն, թէ քակտումն յարաբերութեանց այդոցիկ է նշան սկսանելոյն պատերազմական գործողութեան, Ճապոնական Կառավարութիւնն ետ հրաման ականակիր նաւուց՝ յանկանծակի յարձակիլ ի վերայ նաւատորմին ՄԵՐՈՑ, գտելոյն յարտաքին նաւակայանի Պորտ-Արտուր բերդի:

Յետ ընդունելոյ վասն այսր դյայտարարութիւն փոխարքային ՄԵՐՈՑ ի Հեռաւոր

Երևելի ՄԵՐ նոյն ժամայն հրամայեցաք զինեալ ուժով պատասխանել կոչման Նապոնիայի։

Յայտնելով զայս վճիռ ՄԵՐ՝ ՄԵՐ անյողդողդ հաւատով յօգնութիւն Ամենաբարձրելոյն և հաստատ ապաւինելով ի միասիրտ պատրաստութիւն համայն հաւատարիմ հպատակաց ՄԵՐՈՅ յառնել ընդ ՄԵՐՈՒ ի պաշտպանութիւն հայրենեաց՝ կոչեմք զօրհնութիւն Աստուածային ի վերայ քաջարի զօրաց բանակի և նաւատորմի ՄԵՐՈՅ։

Տուեալ ի Սանկտ-Պետերբուրգ ի քսանեօթներորդում աւուր յունվարի յամի Տեառն հազարերորդի իններհարիւրերորդի չորրորդի և թագաւորութեան ՄԵՐՈՅ տասներորդի։

Ի բնագրին՝ իսկական ձեռամբ Նորին Կայսերական Մեծութեան գրեալ է.

ՆԻԿՈԼԱՅ

/Пр. Вѣст.)

Երբ վերոգրեալ Բարձրագոյն Հրովարտակի հրատարակումն իմացուեց, Նորին Սրբութիւն ազգիս Վեհափառ Հայրապետն ի կատարումն իւր հաւատարմական պարտքի առ Կայսերական Գահոյքը եւ ընդհանուր հայրենիք, ներկայ պատերազմի առթիւ, որ մղում է Նապոնիայի դէմ հեռաւոր Արեւելքում; Փետրուար ամսի 2-ին շրջաբերական հեռագրով յանուն Ռուսաստանի Հայոց Թեմական ներին՝ հրամայեց կատարել մաղթանք բոլոր հայ եկեղեցիներում ընդհանուր խաղաղութեան եւ Ռուսիոյ փառաց եւ բարգութեան համար։ Հեռագրի օրինակն էր այսպէս, «Պատուի-

ռեմք կատարել յամենայն Եկեղեցիս զմաղթանս, զի շնորհեսցէ Տէր արեւշատութիւն Նորին Մեծութեան Թագաւոր Կայսեր եւ բարձցէ զծանր փորձութիւն, զոր առաքեաց Ամենակարողն ի վերայ հասարակաց հայրենեաց Մերոց եւ պարգեւեսցէ խաղաղութիւն ի բարօրութիւն եւ ի փառս Մեծին Ռուսիոյ»։

Իսկ Փետրուարի 3-ին Ս. Ղեւոնդեանց տօնի օրը Ս. Պատարագից յետոյ համայն միաբանից եւ բազմութիւն աղօթաւորաց, Հոգ. ճեմարանի ուսուցչաց եւ աշակերտաց, ինչպէս եւ Վաղարշապատի երկսեռ ուսումնարանների ուսուցչաց եւ աշակերտաց ներկայութեան Մայր Տաճարում կատարուեց մաղթանք, որից եւ անմիջապէս յետոյ, Նորին Սրբութիւնն ուղղեց իւր ամենահպատակ հեռագիրն յանուն Թագաւոր Կայսեր։ Հեռագիրն ստանալուն պէս հայ եկեղեցիներում ամէն տեղ կատարուեց մաղթանքներ Ջերմեռանդ աղօթքներով։